

ՄԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՅԻ» 1698 Թ.
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ. Մ. ԴԱՎԹՅԱՆ

Հայկական ՍՍՀ Մաշտոցի անվան Մատենադարանը լույս է ընծայել միջ-
նադարյան հայ բառարանագրության նշանավոր երկերից մեկը՝ «Բառգիրք
հայոցը»։ Այն տպագրության է պատրաստել հայ հին բառարանագրության
ճանաչված մասնագետ Հայկ Ամալյանը։ Աշխատությունը տարիների քրտնա-
ջան տպնության արգասիք է և, ինչ խոսք, արժեքավոր ավանդ մեր մշակույթի
անդամատանում։ Լեզվաբանական գրականությունը հարստացավ մի ուշեա-
տությամբ ևս, որը այսուհետև մեր մշակույթի և մասնավորապես հայոց լեզ-
վի պատմությամբ զբաղվողների հիմնական աղբյուրներից մեկն է լինելու։

Բառարանի լեզվական կողմի քննությունը մեր նպատակներից դուրս հա-
մարելով, ներկա հոդվածում կարծարժենք նրա առաջին տպագրության հետ
կապված մի շարք խնդիրներ, որոնք եթե ոչ անմիջաբար, սակայն անուղղակիո-
րեն առնչվում են բառարանի բովանդակության, բառակազմի, դրանց աղա-
վադումների ու ուղծատումների հետ։

Առաջաբանում Հ. Ամալյանը միանգամայն իրավացիորեն նշում է. «Բնա-
գրային վերականգնումները և այս կամ այն անստույգ ու խնդրական բառի
վերաբերյալ դատողությունները լիարժեք չեն կարող լինել առանց ձևագրերի
գրության ժամանակի ու տեղի, ինչպես նաև այլ հանգամանքների հաշվառ-
ման» (ընդգծումը մերն է — Հ. Դ.)¹։ Այնուհետև հայտնում է, որ համեմատա-
կան բնագիրը կազմելուց առաջ նախապես հիմք է ընդունել բառարանի առա-
ջին տպագրությունը, նրա հետ սկզբից մինչև վերջ բառ առ բառ համեմատել
է շուրջ երեսուն ձևագրեր²։ Ավելին. բառերի տարբերակներն ու տարբերեց-
վածքները նշելիս երեք հիմնական ձևադրերից հետո վկայաբույրում է տպա-
գիր բառարանը։ Այնհայտ է, ուրեմն, այն խոշոր դերը, որ հատկացվել է տպա-
գիր օրինակին ներկա քննական բնագիրը կազմելիս։ Սակայն բառգրքի առա-
ջին տպագրության վերաբերյալ Ամալյանի ունեցած ոչ ստույգ տեղեկություն-
ները հանգեցրել են մի շարք թյուրիմացությունների ու անհիմն հավաստում-
ների։

Դրբի առաջարկում և ծանոթագրություններում Ամալյանը աներկբայո-
րեն բառարանի առաջին տպագրության վայրը համարում է Իտալիայի Լիվոռ-
նո (Լիվոռնո) քաղաքը։ Երեմիա Մեղրեցուն մերթ վարանումով (տե՛ս,
օրինակ, դրբի սկզբի համառոտ ծանուցումը), մերթ էլ հաստատ (էջ Ծ, Զ, ԺԸ)
համարում է «Բառգրքի» կազմող-հեղինակ, իբրև անառարկելի, վաղուց հաս-

¹ «Բառգիրք հայոց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալ-
յանի», Երևան, 1975, էջ Ժ։

² Նույն տեղում, էջ ԺԱ։

տատված ճշմարտություն արձանագրում է, թե նա կենդանի է եղել մինչև XVII դարի վերջը և անմիջականորեն մասնակցել է գրքի տպագրությանը:

Քանի որ բոլոր այս հավաստումները Ամալյանը լուծված-ավարտված է համարում իր մի այլ, 1971 թ. լույս տեսած «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI—XVII դդ.)» աշխատության մեջ, ուստի ստորև կանոգրագրողներն այդ աշխատության փաստերին և կիսորձերն պարզաբանել մի քանի իրողություններ, որոնք դուրս են մնացել բառարանագետի տեսագաշտից:

Հիմնվելով Աստվածաշնչի ձեռագիր բառարաններում հանդիպող «Մեղրեցի» անվան և տպագիր «Բառգիրք հայոցի» տիտղոսաթերթի «Ի Սուրբ էջմիածին» արտահայտության վրա, Հ. Ամալյանը Երեմիայի ծննդավայրը՝ Մեղրին, իսկ գործունեության վայրը՝ էջմիածինը համարելով, գրում է. «Բանասիրական ճանապարհով պարզվում է, որ Աստվածաշնչի բառարանը, որ ամենուրեք հայտնի է Մեղրեցու անունով, գրվել է դարի վաթսուական թվականներին: Այդ ժամանակներից էլ Երեմիայի եղել է էջմիածնում: Նա կենդանի է եղել մինչև XVII դարի վերջը. 1698 թ. որպես հրատարակիչ լույս է ընծայել «Աղուէսագիրք»-ը և «Բառգիրք հայոց» բառարանը³: Ելնելով Գ. Զարբհանալյանի այն ենթադրությունից, թե իբր Մեղրեցին ունեցել է Սարգիս անունով մի «գործակից կամ աշխատակից»⁴, Ամալյանը շարունակում է. «Սարգիս եպիսկոպոսը, որի անունը հիշատակված է տպագիր բառարանի տիտղոսաթերթի վրա և հիշատակարանում, անմիջական մասնակցություն է ունեցել բառարանի հրատարակության աշխատանքներին և եղել է, հավանաբար, Երեմիա Մեղրեցու ընկերներից մեկը»⁵:

Հետագա էջերում Ամալյանը հերքում է Ն. Ակինյանին, որը Մեղրեցուն ոչ միայն ամբողջ «Բառգիրք» հեղինակ չի համարում, այլև կասկածում է նրա հրատարակիչ լինելու վրա: «Մի՞թե հայ հրատարակիչներն ու տպագրիչները այնքան անտեղյակ էին մեր մատենագրությանը, — տարակուսում է Ամալյանը, — որ տպագիր գրքի չափազանց սուր կարիքի ու տպագրման նյութական-տեխնիկական այնքան սուղ պայմաններում չիմանային նույնիսկ իրենց տպագրած գրքի հեղինակի անունը: Մի՞թե Լիվոռնոյի տպարանը, որ կրում էր Ս. էջմիածնի անունը և սպասարկվում էր նրա միաբանների կողմից, ամբողջ 1698 թ. ընթացքում իր լույս ընծայած երկու գիրքն էլ թյուրիմացաբար է վերագրում Երեմիա վարդապետին, որն այդ ժամանակ, հավանաբար, կենդանի է եղել և աշխատակցել է տպարանին: Վերջապես, մի՞թե էջմիածնի միաբանությունն անտեղյակ էր իր տպարանում հրատարակվող դրքերին»⁶: Ապա՝ «Հրատարակիչ Երեմիա վարդապետը հատկապես «Բառգիրքի» բնագրի հրատարակության ուղղությամբ մեծ աշխատանք է կատարել: Եվ ո՞վ կարող էր հող տանել բառարան տպագրելու համար, եթե ոչ առաջին հերթին բառարանագիրը»⁷:

3 Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ (XVI—XVII դդ.), Երևան, 1971, էջ 82—83:

4 Գ. Զարբհանալյան, Պատմություն հայերեն դպրության, հատ. Բ, Վենետիկ, 1878, էջ 407:

5 Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները, էջ 83:

6 Նույն տեղում, էջ 219:

7 Նույն տեղում, էջ 221:

Այս մտորումները, սակայն, հետևանք են հայկական տպագրության պատմության բազմաթիվ մոլթ կետերի, ժամանակի հասարակական մտքի ու հոսանքների բազմակողմանի ուսումնասիրության պակասի:

Ա. Ալպոյաճյանի, Գ. Դալեմքյարյանի և հետագա այլ ուսումնասիրություններից պարզվել է, որ 1690 և հետագա տարիներին Հիվոնոյում առհասարակ ոչ մի հայկական տպարան գոյություն չի ունեցել, որ «Բառգրքի» և «Աղվեսագրքի» հրատարակիչները ոչ թե էջմիածնի միաբանները, այլ միանգամայն հակառակ դավանանքի պատկանող անձինք են եղել, և այդ գրքերի տիտղոսաթերթերի ոչ բոլոր տվյալներն են հավաստի⁹:

Գ. Լեոնյանը հայ տպագրության պատմությանը նվիրված իր աշխատության մեջ կրկնել է ավելի վաղ արտահայտված սխալը՝ Հիվոնոյում 1690—1698 թթ. իբր թե գործող տպարանի մասին¹⁰: Այստեղից էլ առաջացել են հետագա թյուրիմացությունները, որոնցից մեկն էլ Երեմիա Մեղրեցուն հրատարակիչ համարելն է¹⁰: Բայց նախքան այս հարցի մասին խոսելը, անհրաժեշտ է անդրադառնալ մի այլ թյուրիմացության, որը նույնպես կապված է Մեղրեցու անվան հետ:

Անցյալ դարում որոշ բանասերներ Երեմիա Մեղրեցուն համարել են նաև միջնադարյան առեւկազիր ու դասն Վարդան Այգեկցու և Մխիթար Դոշի շարքը: Եվ ահա թե որտեղից է սկիզբ առել այս անճշտությունը:

Մինչև XIX դարի կեսերը «Աղվեսագիրքը» ունեցել է չորս հայերեն և մեկ օտարալեզու մասնակի հրատարակություն. առաջինը՝ էջմիածնի միաբան, նշանավոր տպագրիչ Ոսկան Երևանցու ձեռքով, 1668 թ. Առաքելաբանության, երկրորդը՝ Ոսկանի տպարանը ժողովրդի կողմից, 1683 թ. Մարտիրոս: Վերջին երկուսը անցյալներում տպագրվել են հորենացուն վերագրվող «Աշխարհացոյցի» հետ միևնույն զրբում և ունեն այսպիսի խորագիր. «Դիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք»: Երկու հրատարակություններում էլ որևէ հեղինակ նշված չէ: Բայց ահա 1698-ին գիրքը լույս է տեսնում երրորդ անգամ, հետևյալ տիտղոսաթերթով. «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց: Որ է Աղուէսագիրք: Ի Սուրբ էջմիածին Երեմիայ Վարդապետէ»: Դրանից 129 տարի հետո, 1827 թ. գիրքը լույս է ընծայվում չորրորդ տպագրությամբ (միայն առականներ): Բայց այս անգամ հրատարակիչները, ըստ երևույթին նախորդ տպագրության տիտղոսաթերթի տվյալները պարզեցնելու միտումով, որոշ լրացումներ են արել. «Աղուէսագիրք, որ գեղեցիկ առակաբանութեամբ խրատ է զմարդիկ զգուշանալ ի շարեաց և գործել դրարիս: Արարեալ յԵրեմիայ Վարդապետէ Արևելոյց»: Հայերեն այս հրատարակություններից բացի, 1825 թ. Փարիզում լույս է տեսել նույն առականներից կազմված մի փոքր հայերեն բնագրերով և ֆրանսերեն թարգմանությամբ:

⁹ Ժամանակին մենք նույնպես թույլ ենք տվել Մեղրեցուն հրատարակիչ համարելու սխալը, տե՛ս ՀՄԸ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 1, էջ 35: «Հայ գիրքը 1801—1850 թթ.» մատենագիտության էջ 146-ի № 569 նկարագրության ծանոթագրությունը:

¹⁰ Գ. Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 119:

¹¹ Տե՛ս, օրինակ, Գ. Դալեմքյարյան, Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և ժամանակի հայ կաթողիկոսաց, Վիեննա, 1915, էջ 83—84: Այս հարցին անդրադարձել է նաև Ա. Ալպոյաճյանը իր «Տպագրության արվեստ և հայք» աշխատության մեջ, որի մի մասն է միայն տպագրվել «Արորի» 1913 թ. Ա գրքով, իսկ ձեռագիրը ամբողջությամբ այժմ պահվում է Ե. Զարենցի անվան գրականության ինստիտուտի ձեռագրերի բաժնում:

«Հատընտիր առակք Վարդանայ Վարդապետի. Choix de Fables de Vartan. En Arménien et en Français» ղույզ տիտղոսաթերթերով:

Այս տեղեկության հիման վրա է ֆրանսիացի բանասեր Դյու Մերիլը 1854 թ. փարիզում հրատարակած իր «Միջնադարյան բանավոր պոեզիան» («Poésies inédites du moyen age, précédées de la Fable Ésoquique»)՝ աշխատության մեջ Այգեկցու և Գոշի կողքին ղնում մի երրորդ առակագիր ևս՝ Երեմիա վարդապետ:

Ճիշտ էման մոլորության վրա է հիմնված նաև Մեղրեցուն հրատարակիչ համարելը: Ն. Յա. Մառը ժամանակին Երեմիայի առակագիր լինելը հերքելիս իր նպատակից դուրս խնդրի մեջ չխորանալով, ենթադրում է. «Ըստ երևույթին Աղվեսագրոց «Կեղծ էջմիածնյան» 1698-ի տպագրության հրատարակիչը փոխված եղած է հեղինակ»¹¹: Այս ենթադրությունից բացի ուրիշ ոչ մի տեղ ոչ «Աղվեսագրքի», ու «Բառգիրք Հայոցի» մեջ կամ այդ շրջանի որևէ այլ գրքում, ո՛չ էլ բանասիրական աղբյուրներում, Երեմիա Մեղրեցու հրատարակիչ լինելու մասին որևէ ակնարկ չկա: Ընդհակառակն, «Բառգիրք» հիշատակարանում որոշակիորեն ասված է. «Աւարտեցաւ բնագիրքս... Աշխատասիրութեամբ Սարգսի բանասիրի Եղոկիացոյ, որ և Սահէթձի վերածայնեալ և որդեակն իմ Սիմոնն, որ յոյժ աշխատեցաւ ընդ յիս ի թափել զգիրսն և ի սրբագրելն»:

Սարգիսը նաև բառարանի խմբագրող, Աստվածաշնչի բառերը նրան միաձուլողն է, ինչպես երևում է տիտղոսաթերթից. «Բառգիրք Հայոց, Արարեալ ի Սուրբ էջմիածին Երեմիայ Վարդապետէ: Եւ ես Սարգիս Եպիսկոպոսս աշխատասիրեալ. և զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. որ և ընթերցողացն Աստուածաշունչ գրոց բաւական է լիով. տպագրեցաւ: Ի Հայրապետութեանն Տեառն Նահապետի Կաթողիկոսի ամենից Հայոց. Ի ՅԱրևիկոնայ քաղաքի. և Թուականութեանն Հայոց ՌՃԽԷ. յունիս Ժ և ի թվին ՓԲԿԻՆ. 1698. յունիսի Ժ»:

Նույնը ավելի մանրամասնությամբ, ինչպես ընդունված էր հնում, ասվում է նաև հիշատակարանում:

Սրանով թերևս «Բառգիրք» խմբագիր-հրատարակչի հարցը ավարտված համարենք: Բայց այստեղ հանդիպում ենք մի ուրիշ առեղծվածի: Գրքի երկրորդ տպագրության (Կ. Պոլիս, 1728) հրատարակիչները միանգամայն այլ մարդիկ են, իսկ տիտղոսաթերթից ու հիշատակարանից էլ բոլորովին հանված է Սարգսի անունը, կարծես թե նա որևէ մասնակցություն չի ունեցել առաջին տպագրության խմբագրման ու հրատարակման աշխատանքներին: Ահա. «Բառգիրք Հայոց. արարեալ ի Սուրբ էջմիածին Երեմիա Վարդապետէ. և բառք Աստուածաշունչ գրոց ընդ սմա միաւորեալ: Որև ընթերցողաց զԱստուածաշունչ գիրս բաւական է լիով: Տպեցաւ ի Հայրապետութեան Տեառն Կարապետի սրբազան Կաթողիկոսի: (ՌՃՀԷ)»:

Այս Սարգսի կյանքի հետքերով գնալիս մեր առջև բացվում է վերահիշյալ բոլոր սխալանքների կծիկը: Զարմանալին այն է, որ Երեմիա Մեղրեցու մասին որևէ տեղեկություն չենք գտնում ո՛չ Չամչյանի ու Լեոյի պատմական երկե-

¹¹ Н. Я. Марр, Сборники притч Вардана, ч. 1, СПб., 1899, էջ 3, համտ. Հ. Տաշյան, Ժողովածույր առակաց Վարդանա, Վիեննա, 1900, էջ 9:

րում, ո՛չ էլ անցյալի այլ հետազոտություններում, մինչդեռ Սարգսի մասին բավականաչափ հարուստ նյութեր կան:

Գրիգորիս Գալեմբյարյանը իր «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու և ժամանակի հայ կաթողիկեայք» (Վիեննա, 1915) գրքում՝ Ա. Աղեքսանդրյանի «Համառոտ պատմություն 12 կաթողիկոսաց» աշխատությունից, խաչատուր էրգրումեցու օրագրություններից, Ստեփանոս Ռոշքայի ժամանակագրությունից և այլ աղբյուրներից քաղված փաստերով հյուսում է Սարգսի կյանքի ու գործունեության պատմությունը: Պարզվում է, որ «Բաուդրբում», «Աղվեսագրքում» և մի երկու այլ գրքերում հիշատակվող Սարգիս եպիսկոպոս Սահերձին կամ Սարգիս Եվդոկիացի Գասպարյանը ապրել է XVII դարի վերջին և XVIII դարի առաջին երեք տասնամյակներում: Եղել է կաթողիկ և բուռն մասնակցություն է ունեցել հասարակական-կրոնական իրադարձություններին:

Այն դեպքում, երբ Մխիթար Սեբաստացին, խաչատուր էրգրումեցին և ուրիշներ XVIII դարի սկզբում Կ. Պոլսից հեռացել և իրենց գործունեությունը ծավալել են Վենետիկում, Հռոմում և այլուր, Սարգիսը իր մի խումբ համախոհների հետ մնացել է Պոլսում: Դավանաբանական պայքարի հետևանքով հալածվել, երբեմն թաքնվելով հետապնդումներից զրոծել է ծալված, մինչև որ 1714 թ. նոյեմբերին շատերի հետ ձերբակալվել ու բանտ են նետվել նաև Սարգիսն ու նրա ընկեր Երեմիա Եպիսկոպոսը¹²: Մահապատժից փրկվելու համար Սարգիսն (իր ընկեր Երեմիայի հետ), առերես ընդունում է մահմեդականություն, շարունակում է մնալ Պոլսում: Որոշ ժամանակ անց նրան հաջողվում է Եվրոպայի քարոզիչների օգնությամբ փախչել Հռոմ, ուր և մասնավորապես է 1729 թ.¹³:

Սարգիս Եվդոկիացին և նրա համախոհ կաթողիկներն իրենց դավանաբանական, քարոզչական պայքարի ընթացքում լայնորեն օգտագործել են նաև տպագիր խոսքեր: Գալեմբյարյանը ապացույցում է, որ նրանք ռենեին սեփական տպարան: Հետագա հետազոտություններից պարզվել է, որ կաթողիկները ձեռք են բերել Ոսկան Երևանցու տպարանը, տեղափոխել Կ. Պոլիս և Պեկոզլի թաղամասում հիմնել տպարան, որը մերթ զաղտնի, մերթ էլ բացահայտ գործել է 1692—1718 թթ. ընթացքում: Նրանք հրատարակել են շուրջ հիսուն անուն գիրք: Սուր պայքարի տարիներին իրենց հետքերը թաքցնելու համար դիտավորյալ գրքերի տիտղոսաթերթներում չեն նշել հրատարակության վայրը, մերթ էլ դրել են եվրոպական հեռավոր քաղաքների՝ Ամստերդամ, Մարսել, Լիվոռնո անուններ, ուր մի ժամանակ գրքեր է տպագրել Ոսկան Երեվանցին: Միաժամանակ նրանք պահպանել են Ոսկանի տպարանի անունը՝ «Ս. էջմիածնի և Ս. Սարգսի զորավարի», դրանով Կ. Պոլսի պատրիարքության և լուսավորչականների դեմ պայքարող կաթողիկները ապահովագրել են իրենց, արտաքնապես ցույց տալով, թե իբր իրենք էջմիածնական են, չեն հրաժարվում էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսությանը ենթարկվելուց: Նույն նպատակն է հետապնդել նաև որոշ գրքերի վրա էջմիածնի Ամենայն հայոց

¹² Այս Երեմիային, որի մասին շահողվեց լրացուցիչ տեղեկություններ գտնել, չսկսեցի շփոթել Երեմիա Մեղրեցու հետ:

¹³ Գ. Դավթյան, նշվ. աշխ., էջ 85 և հտ.

կաթողիկոսի անվան հիշատակությունը¹⁴։ Այս շարժառիթներով էլ բացատրվում են 1698-ին լույս տեսած «Աղվեսագրքի» տիտղոսաթերթում տպագրության վայրի գանցառումը¹⁵, «Բառգիրք հայոցի» վրա Կ. Պոլսի լիոնյան «ՅԱԼԻԿՕՆՅԱ» (Լիվոնո) նշելու և այլ տպագրական կեղծիքները։ Այդ երկու գրքերն էլ տպագրվել են Կ. Պոլսի Պեկոզլի թաղամասի տպարանում Սարգիս Եվդոկիացու ջանքերով։ Էջմիածնի միաբան Երեմիա Մեղրեցին, էթև այդ ժամանակներում ապրում էլ էր (որ հավանական չէ)։ Կ. Պոլսի կաթողիկոսների հետ համագործակցել և գրքեր տպագրել չէր կարող։

«Բառգրքի» առաջին տպագրության հրատարակիչը կաթողիկոսների ճանաչված առաջնորդներից մեկն էր՝ Սարգիս Եվդոկիացին։ Ահա թե ինչու կաթողիկոսներին հալածելուց հետո Կ. Պոլսի պատրիարքությունը, որի ձեռքին էր գրահրատարակչության իրավասությունը և որին, պարզ է, չէին ենթարկվում կաթողիկ հրատարակիչները, պետք է շտապեր վերահրատարակել «Բառգրքը», նրա վրայից ջնջելով տակավին կենդանի, բայց անհայտության մեջ ու հալածական Սարգիս անունը։ Ավելի շուտ սա է եղել ճիշդը վերահրատարակելու դրդապատճառը, քան «սպառնալ» լինելու հանդամանքը, ինչպես նշված է տիտղոսաթերթում։

Ուրեմն «Բառգիրք հայոցի» առաջին տպագրությունը կատարվել է հայաշատ ու հայ մշակույթի այն ժամանակվա ամենախոշոր կենտրոնում՝ Կ. Պոլսում, Սարգիս Եվդոկիացու ձեռքով։ Վերջինս, սակայն, սոսկ հրատարակիչ չէ։ Թերևս ճիշտ է ն. Ակինյանը, որը տպագրված «Բառգրքին» անդրադառնալով, նկատել է. «Այս բնագիրը նոր խմբագրության ենթարկված է տպա Սարգիս եպիսկոպոսեն, որ ոչ միայն 1—6 մասերը միացուցած-ծուլած է, այլև մոծած է հավելվածներ և անդգույշ տպագրությամբ սպրգած են վրիպակ ընթերցվածներ»¹⁶։

Հետևաբար մեծ է Սարգիս Եվդոկիացու դերը հայ բուստրանագրություն մեջ և արդարությունը պահանջում է նրան վերագրել այն դրական գնահատականները, որ վերաբերում են «Բառգրքի» տպագրությանը¹⁷։ Պարտավորեցնող է թեկուզ հենց «Բառգիրք հայոց» անունը, որ հատուկ է «միայն տպագիր օրինակի»¹⁸ և որը հաստատապես մտել է մեր բանասիրության մեջ ու այդ անունով էլ լույս է տեսել այսօր։

Վերևում շարադրվածը բավականաչափ հիմքեր է տալիս հետևյալ հղրականություններին անելու։

¹⁴ Այս հարցերի մասին մանրամասն տե՛ս Հ. Մ. Գալթյան, Կ. Պոլսի հայ կաթողիկոսների գաղտնի տպարանը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 1, էջ 29—39։

¹⁵ Այստեղից էլ ծագել է դիրքը էջմիածնում տպագրված լինելու սխալը (տե՛ս, օրինակ, Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 84, ծան. 29)։ Այնինչ էջմիածնի տպարանը հիմնադրվել է 1771 թ. և դրանից առաջ այնտեղ գիրք տպագրվել չէր կարող։ Ի դեպ, համանման վրիպում թույլ է տվել նաև Գ. Գասպարյանը, «Բառգիրք հայոցի» 2-րդ՝ Կ. Պոլսի 1727 թ. հրատարակությունը համարելով էջմիածնի տպագրություն (տե՛ս Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 70, տողատակի ծանոթագրություն)։

¹⁶ Ն. Ակինյան, ռ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան [Գրախոսություն], «Հանդես ամսօրյա», 1930, № 7—8, էջ 482։

¹⁷ Հմտ. Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ, էջ 84, 221, 235—236 և այլն։

¹⁸ Նույն տեղում, էջ 193։

ա) «Բառգիրք հայոց» բացատրական բառարանի առաջին տպագրությունը կատարվել է ոչ թե իրավունքով, այլ Կ. Պոլսում: Գրքի տիտղոսաթերթի տպագրության վայրի «յԱլիկօռնայ» նշումը տպագրության իսկական վայրը թարցնելու միտումով կատարված գիտավորյալ կեղծիք է:

բ) Երեմիա Մեղրեցին չի մասնակցել ո՛չ «Բառգիրք հայոցի», ո՛չ «Աղվեսագրքի», ո՛չ էլ որևէ այլ գրքի տպագրությանը: Նրան հրատարակիչ համարելը անհիմն թյուրիմացություն է: Մեղրեցու ապրած ժամանակի մասին մինչև այժմ որևէ ստույգ փաստաթուղթ չի հայտնաբերված և «Բառգիրք հայոցի» տպագրության ժամանակ, այսինքն 1698 թ. նրա կենդանի լինելու ենթադրությունը հավանական չէ:

գ) Հնարավոր է, որ Երեմիա Մեղրեցին է ընդօրինակողն այն ձեռագիր օրինակի, որը հիմք է ծառայել տպագրության համար և որը ցարդ հայտնաբերված չէ:

դ) «Բառգիրք հայոցի» առաջին տպագրության իմբագիր-հրատարակիչը, այլևայլ ներմուծություններ ու մեկնաբանություններ կատարողը Սարգիս Եվգրակիացին է:

ЗАМЕЧАНИЕ ОБ ИЗДАНИИ «АРМЯНСКОГО СЛОВАРЯ» 1698 ГОДА

А. М. ДАВТЯН

(Резюме)

В предисловии к средневековому «Армянскому словарю» (критический текст, предисловие и комментарии Г. М. Амаляна), выпущенному Институтом древних рукописей им. Маштоца (Матенадараном), указывается, что при подготовке текста большое место было отведено изданию 1698 года. Однако некоторые вопросы, связанные с этим изданием, остались неразрешенными как здесь, так и в предыдущей работе Г. Амаляна «Лексикографические памятники средневековой Армении». Исходя только из сведений титульного листа первого издания, Г. Амалян утверждает, что книга вышла в свет в итальянском городе Ливорно, а издателем ее является эчмиадзинский монах Иеремия Мегреци. Между тем уже давно установлено, что «Словарь» издали константинопольские армяне-католики, которые часто действовали тайно от армян-григориан и указывали на титульных листах своих изданий дезориентирующие, вымышленные сведения. В действительности первый армянский толковый словарь вышел в свет не в Ливорно, а в Константинополе. Его отредактировал и издал с дополнениями один из видных армяно-католических деятелей Саркис Евдокиац Гаспарян. Что же касается Иеремии Мегреци, то он не упоминается в историографических трудах; по всей вероятности, во второй половине XVII в. такого автора не существовало.